



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

ՀՀ Դաշնակցության Կենտրոնական խորհրդի հայտարարությունը ՀՀ վարչապետի հերթական անհիմն պնդումների վերաբերյալ

ՀՀ վարչապետը 2022 թ. հունվարի 24-ի հարցազրույցում իրեն թույլ է տվել պնդումներ, որոնք մի կողմից խեղաթյուրում են պատմական փաստերը, մյուս կողմից՝ գրեթե նույնությամբ կրկնում հարբեջանաթուրքական թեզերը, որոնց դեմ Հայաստանի Հանրապետությունը եւ Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համաշխարհային ցանցը տեւական ժամանակահատված արդյունավետ պայքար են մղել: Ներկայումս չափազանց ցավալի է Հայաստանի գործադիր իշխանության ղեկավարի շուրթերից լսել թշնամական թեզերի կրկնություն:

Ի թիվս բազմաթիվ թշնամահաճ պնդումների, Փաշինյանը հայտարարել է, թե «Հայաստանի Հանրապետությունը երբեք Հայ դատի քաղաքականություն չի վարել», իսկ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը գլխավորապես համարել է սփյուռքյան գործունեության արդյունք:

Հայ դատ ասելով՝ Փաշինյանը տվյալ դեպքում հավանաբար նկատի ունի Հայոց ցեղասպանության պահանջատիրության հարցը՝ դիտավորությամբ մոռացության մատնելով այն փաստը, որ 1921թ. Կարսի պայմանագիրը, որը միջազգային իրավունքի տեսանկյունից առ ոչինչ է, ցայսօր ընդունված է Հայաստանի Հանրապետության կողմից որպես Հայաստան-Թուրքիա սահմանի իրավական հիմք: Այդ մասին է վկայում 2009թ. հոկտեմբերի 10-ին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձում կատարված հետեւյալ հաստատումը. «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ առկա սահմանների հարցը ենթակա է լուծման միջազգային իրավունքի համաձայն: Արձանագրությունները դրանից ավելի ոչինչ չեն ասում»: Ավելին, ցյուրիխյան արձանագրությունների սահմանադրականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի 2010թ. հունվարի 12-ի որոշմամբ՝ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանը նշվում է որպես «փաստացի սահման»:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի կողմից կազմված է 2015թ. հունվարի 29-ին Տիծեռնակաբերդում ներկայացված՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը եղել է մտում է Հայոց ցեղասպանությանն առնչակից հանգամանքների եւ առաջիկա անելիքների վերաբերյալ համազգային եզակի փաստաթուղթ, որն իր համընդգրկունությամբ եւ ընդունվածության համախոհությամբ ցայսօր էլ շարունակում է բարձր արժեք ունենալ:

Պետք է արձանագրել նաեւ այն փաստը, որ եթե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը գլխավորապես եղել է սփյուռքյան կառույցների գործունեություն, այդ գործունեության արդյունավետությունը բազմապատկվել է այն ժամանակ, երբ ՀՀ օրվա իշխանությունները սատարել են այդ գործին՝ 1990թ. օգոստոսի 23-ին որդեգրված Հայաստանի Անկախության հռչակագրով ստանձնված հանձնառության համապատասխան:

→ 2



ՀՀ վարչապետն առկա փաստաթղթերը սխալ է ներկայացնում

ՀՀ վարչապետի հարցազրույցից հետեւում է, որ ՀՀ-ն իր վրա որեւէ պարտավորություն չի վերցնում Արցախյան հարցի կարգավորման շուրջ բանակցությունները շարունակելու եւ հայանապաստ որոշումներ ընդունելու համար: Այս մասին «Ապարաժ»-ի հետ զրույցում նշել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Վահրամ Բալայանը:

«Ինչպես նախորդ հարցազրույցում, նույն կերպ էլ երեկվա հարցազրույցում վարչապետն ավելի շատ մտահոգ էր նախկին ԼՂԻՄ տարածքում ապրող արբեջանցիների ճակատագրով: Բայց չպետք է մոռանալ, որ ԼՂԻՄ-ը ձեւավորվել է որպես հայկական ինքնավար միավոր: Փաստաթղթերում ձեւակերպված է, որ ԼՂԻՄ-ը հայկական տարածքների վրա ձեւավորված հայկական ինքնավարություն է:

Խոսել այն մասին, թե այդ դեպքում մյուս ազգերի ներկայացուցիչները ինչ ճակատագիր են ունենալու, նշանակում է հարցը փակուղի տանել», - ասել է Վահրամ Բալայանը:

Անդրադառնալով տարածքային ամբողջականության մասին հարցին, Վահրամ Բալայանը շեշտել է, որ ՀՀ վարչապետը առկա փաստաթղթերը սխալ է ներկայացնում: Մինսկի համանախագահ երկրների ներկայացուցիչները մշտապես հայտարարել են, որ հար-

ցը պետք է լուծվի տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման եւ ուժի չկիրառման սկզբունքների հիման վրա:


«Կոնտեքստից կտրել ու միայն տարածքային ամբողջականությունը ներկայացնել, հարցը փակուղի տանելու ձեւ է: Բայց այդ սկզբունքի հետ էլ Արցախի Հանրապետության ժողովուրդը խնդիր չունի: ԼՂԻՄ-ը, այդ թվում նաեւ Խորհրդային Ադրբեջանը միջազգային իրավունքի սուբյեկտ չեն եղել:

Խորհրդային Միությունն ունեցել է ինքնավարության չորս տիտղոսներ՝ միութենական հանրապետություններ, ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր եւ ինքնավար օկրուգներ: Մենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդում հինգ պատգամավորներ ենք ունեցել, որոնք ներկայացնում էին Արցախի ժողովրդի շահերը: Հիմա ո՞ր տարածքային ամբողջականության մասին է խոսքը: ԼՂԻՄ-ն էլ էր օգտվում տարածքային ամբողջականության սկզբունքից, սա միայն Ադրբեջանին չի վերաբերում:

Արցախյան հիմնահարցը կարելի է նաեւ այս տեսանկյունից կարգավորել ու հնարավորություն ստեղծել, որպեսզի տվյալ տարածքում հազարամյակների ընթացքում ապրող ժողովուրդը շարունակի ապրել իր հայրենիքում եւ փորձի ինտեգրվել աշխարհին», - նշել է ԱՀ ԱԺ պատգամավորը:

«Ոսկե արծիվ» շքանշանակիր Ալբերտ Յովհաննիսյան


44-օրյա պատերազմի օրերին շատերին է ոգեւորել, հույս ներշնչել հրետանավոր Ալբերտ Յովհաննիսյանի լուսանկարը, ով իր ամբողջ էության միաձուլվել էր հրետանուն, դարձել մի ամբողջություն ու կարծես կտրված իրեն լուսանկարող անձնակազմից, շրջապատի իրականությունից՝ կրակում, այնուհետեւ արկերի պայթյուններից սեւացած մատներով անվրդով խնձոր էր ուտում: Լուսանկարն իրոք դարձել էր պատերազմի եւ բանակի խորհրդանշան: ...19-ամյա Ալբերտի լուսանկարն այդ ծանր հաղթանակի խորհրդանշանը կարող էր դառնալ:



Կարդացեք 4-րդ էջում

Բնակարանային ապահովման ծրագիրը կգործի այնքան ժամանակ, մինչեւ մեր վերջին շահառուն ապահովվի բնակարանով. Մարիանա Պետրոսյան

2020թ. 44-օրյա պատերազմի արդյունքում ստորագրված պայմանագրով թշնամուն հանձնված տարածքներից տեղահանվել եւ տնազրկվել է Արցախի ավելի քան 30 000 քաղաքացի, որոնք ժամանակավորապես հաստատվել են վարձու բնակարաններում կամ հյուրանոցներում, մինչեւ պետության կողմից որպես փոխհատուցում նրանց կտրամադրվեն բնակարաններ: Կարդացեք 5-րդ էջում



ՀՀ-ի Հայ դատի Կենտրոնական խորհրդի հայտարարությունը ՀՀ վարչապետի հերթական անհիմն պնդումների վերաբերյալ

1 ← Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ ՀՀ այս իշխանությունների կողմից կառավարության գործունեության ծրագրին կատարված անընդհատական հղումներին, ապա պետք է նկատել, որ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում նշված է. «Ցեղասպանության միջազգային ճանաչումը Կառավարությունը ծառայեցնելու է ոչ թե տարածաշրջանային լարվածության աճին, այլ ընդհանրապես՝ տարածաշրջանի լիցքաթափման նպատակին»:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է հնարավոր ցեղասպանության միջազգային ճանաչումը համարել Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացմանը: Պետք է նաև ուշադրություն նկատել, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը կառավարության ծրագրում չի ներկայացվում իբրև գործընթաց, ինչը խոսում է ՀՀ արտաքին քաղաքական օրակարգից ճանաչման գործընթացը դուրս բերելու մասին:

Հայաստանի վարչապետը չի խորշել նաև խիստ վտանգավոր հայտարարություններ անել Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ:

Ցավում ենք, որ Հայաստանի վարչապետը կա՛մ այնքան անպատաստ է, որ չգիտի, կա՛մ միտումնավոր խեղաթյուրում է ինքնորոշման իրավունքի եւ տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցությունը միջազգային իրավունքում: Ինքնորոշման իրավունքի եւ տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցության վեճն առավել հստակեցվել է Արդարադատության միջազգային դատարանի՝ միջազգային իրավունքի շրջանակում Կոստովոյի կողմից անկախության միակողմանի համապատասխանության վերաբերյալ 2010թ. հուլիսի 22-ի խորհրդատվական որոշ-

մամբ: Ավելի չխորանալով այդ որոշման իրավաքաղաքական ծալքերի մեջ՝ միայն նշենք, որ Դատարանն ուղղակի արձանագրել է՝ «տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառման ոլորտը սահմանափակ-



վում է ճանաչված պետությունների հարաբերությունների ոլորտով»: Որպես եզրակացություն՝ Դատարանն ընդունել է, որ միջազգային իրավունքը չի արգելում անկախության միակողմանի հռչակումները:

Ավելին, ՄԱԿ-ի Կանոնադրությամբ սահմանված՝ իրավունք եւ սկզբունք հասկացությունները միմյանցից

տարբերվում են, եւ սկզբունքները միտված են իրավունքների ապահովությանը, ոչ թե՛ հակառակը: Հետեւաբար, տարածքային ամբողջականության սկզբունքը եւ ինքնորոշման իրավունքը միմյանց հակադրվել չեն կարող, իսկ Արցախի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ տարածքային ամբողջականության հարց առաջանալ առհասարակ չի կարող, քանի որ, ինչպես արձանագրել է Արդարադատության միջազգային դատարանը, տարածքային ամբողջականության սկզբունքը կարող է կիրառվել միմյանց ճանաչած երկու պետությունների միջեւ հարաբերություններում:

Այսպիսով, փոխանակ օգտվելու Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններում հայկական կողմի դիրքերն ամրապնդող օբյեկտիվ հանգամանքներից, ՀՀ իշխանությունները, անկարող լինելով դա անել, ամբողջապես տրվել են ադրբեջանաթուրքական թեզերի ամոթալի կրկնությանը, իսկ Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման գործընթացում բավարարել են թուրքական հայտնի նախապայմանները:

ՀՀ-ի Հայ դատի աշխարհասփյուռ կառույցը, անկախ Հայաստանի իշխանությունների պարտվողական ու ամոթալի դիրքորոշումներից, շարունակում է մեր ժողովրդի իրավունքների պաշտպանությունը՝ այն վստահությամբ, որ այդ իրավունքների պաշտպանությունը չի կարող պայմանավորված լինել անցողիկ եւ ապաշնորհ իշխանությունների գոյությամբ:

ՀՀ-ի Հայ դատի Կենտրոնական խորհուրդը
25.01.2022 թ.

Պետք է բացառվի գործադիր մարմինների՝ վերահսկողությունից դուրս գործելու հնարավորությունը

Դաշնակցությունը, ի թիվս այլ խորհրդարանական ուժերի, մասնակցել է Արայիկ Հարությունյանի կողմից հրավիրված մի շարք խորհրդակցությունների: Խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են տարբեր հարցեր, այդ թվում՝ Արցախի կառավարման համակարգի վերաբերող: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում

տարբերակին եւ հատկապես նախագահական ու խորհրդարանական միաժամանակյա ընտրություններին, որը ֆորսմաժորային իրավիճակներում երկիրը անիշխանության մեջ թողնելու վտանգ է պարունակում,- նշել է Արթուր Մոսիյանը:

ՀՀ-ի Արցախի ԿԿ ներկայացուցիչը նաև հիշեցրել է, որ Դաշնակցությունը 2020թ. տեղի ունեցած ընտրությունների նախընտրական արշավում, ծրագրային դրույթներում եւս կարելու է Սահմանադրական փոփոխությունների հարցը:



«Մեջբերեմ ՀՀ-ի նախընտրական ծրագրից համապատասխան տողերը. «Նոր սահմանադրության ընդունմամբ ապահովվել օրենսդիր, գործադիր, դատական իշխանու-

նշել է ՀՀ-ի Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիյանը:

«Ինչպես նախապատերազմյան շրջանում, այնպես էլ դրանից հետո Դաշնակցության կողմից բարձրացվել են երկրի կառավարման համակարգի եւ այդ ուղղությամբ կատարվելիք փոփոխությունների անհրաժեշտության խնդիրները, որոնք գլխավորապես պետք է իրականանան Սահմանադրության փոփոխությամբ: Ուզում եմ հիշեցնել, որ Դաշնակցությունը դեմ է արտահայտվել Սահմանադրության գործող

ությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքների իրական եւ լիարժեք կենսագործումը՝ բացառելով գործադիր մարմինների՝ օրենսդիր մարմնի վերահսկողությունից դուրս գործելու հնարավորությունը»: Համոզված ենք, որ Սահմանադրության նոր նախագծում վերոնշյալ սկզբունքների ամրագրման դեպքում կխուսափենք երկրի կառավարման համակարգի ճգնաժամներից», - շեշտել է Արթուր Մոսիյանը:

Տարբերակ ԱՂԱԶԱՆՅԱՆ

Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ իր գլխավորած գաղափարախոսության հետ սկզբունքային տարաձայնություններ ունեն

«Սպիտակ թուղթ»-ը հեղինակների անձնական, փորձագիտական կարծիքն է, որը չունի պաշտոնական նշանակություն: Այս մասին հունվարի 18-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ նշել է ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը՝ պատասխանելով տվյալ փաստաթղթում արտացոլված Արցախի Հանրապետության անհեռանկարության մասին «Ապառաժ»-ի հարցին:

«Սպիտակ թղթում» կան բաներ, որոնք արժեքավոր են, պետք է հաշվի առնել, կան եզրահանգումներ, որոնց հետ ես միանշանակ համամիտ չեմ, այդ թվում, որ Արցախի Հանրապետությունը հեռանկար չունի: Ես իմ տեսակետը հեղինակների մի մասին ներկայացրել եմ, նույնիսկ բանավեճ եմ ունեցել նրանց հետ: Կարծում եմ, որ Արցախի Հանրապետությունը հեռանկար ունի եւ դրա երաշխիքը այս հողի վրա մեր ապրելն ու արարելն է, մեր հետեւողականությունն է, որ կարողանանք պրոֆեսիոնալ կերպով մեր պետականությունն ամրապնդել, որը հեշտ ճանապարհն է: Բավականին երկար ճանապարհ է մեզ սպասվում, սակայն ես համոզված եմ, որ արդյունքները լինելու են», - նշել է Արտակ Բեգլարյանը:

«Ժիրայր Լիպարիտյանին իմ կարծիքը ներկայացնելով՝ ասացի, որ ցավում եմ, որ Արցախի անկախության միջազգային ճանաչման պահը դուրս, միգուցե, չտես-

նք, որովհետեւ ինքը բավականին տարիքով է, բայց ես համոզված եմ, որ այդ պահը լինելու է», - ասել է ԱՀ պետական նախարարը՝ ավելացնելով, որ դա երկարաժամկետ, միգուցե տասնամյակների հարց է, որը հնարավոր է հաջողել, եթե մեր ողջ ազգը համապատասխան համառությունը, հեռատեսությունը ու պրոֆեսիոնալիզմն ունենա:



Անդրադառնալով այդ համատեքստում Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած հանդիպմանը, Արտակ Բեգլարյանը տեղեկացրել է, որ հանդիպման ընթացքում նմանատիպ հարցեր չեն քննարկվել, այլ ավելի շատ կենտրոնացել են 1990-ական թթ. բանակցությունների նրա փորձառության վրա: «Ես Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ իր գլխավորած գաղափարախոսության հետ սկզբունքային տարաձայնություններ ունեմ», - ավելացրել է Արտակ Բեգլարյանը:

Տ. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Դատարանի վճիռները՝ բողոքարկման առարկա

Հունվարի 17-ին կայացել են Արթուր Չարգարյանի՝ ընդդեմ «Վարանդաշին» ՓԲԸ-ի հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու եւ հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար գումար գանձելու պահանջների մասին եւ Գառնիկ Ղահրամանյանի՝ ընդդեմ «Քարահունջ հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու եւ հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար գումար գանձելու պահանջների մասին հարցերով հրավիրված՝ ԱՀ Վերաքննիչ դատարանի նիստերը: Երկու գործով էլ ԱՀ առաջին ատյանի դատարանը որոշում էր կայացրել անվավեր ճանաչել աշխատանքից ազատման հրամանները, վերականգնել նախկին աշխատանքում եւ պարտավորեցրել վճարել հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար գումարը:

«Վարանդաշին» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ, փաստաբան Ռաֆիկ Ավանեսյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է, որ այլ դատական նիստերի մասնակցելու պատճառով իրենք չենք կարողացել մասնակցել առաջին ատյանի դատարանի բոլոր նիստերին եւ ներկայացնել պահանջվող ապացույցները: «Պատասխանող կողմը գրկված է եղել իր տեսակետները հիմնավորելու հնարավորությունից, ուստի խնդրում ենք բեկանել վճիռը, գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ պատշաճ դատաքննություն անցկացնելու համար», - նշել է նա:

«Վարանդաշին» ՓԲԸ տնօրեն Արթուր Մուսայելյանի խոսքով՝ պատերազմի ընթացքում իրենց պարտականությունները չկատարած 11 աշխատակիցներ ազատվել են աշխատանքից, դատարան է դիմել միայն մի հոգի: Դատարանի որոշմամբ նախկին աշխատանքում վերականգնված Արթուր Չարգարյանի նկատմամբ կոլեկտիվը բացասական է տրամադրված, նրանք իրենց մտահոգությունը հայտնել են նաեւ հունվարի 10-ին՝ հավաքվելով Մարտունու վարչակազմի շենքի մոտ:

Արթուր Չարգարյանը հանդիսանում է ընկերության գլխավոր ճարտարագետը եւ քաղաքաշտպանության գծով պետը: «Պատերազմի ժամանակ պաշտոնատար անձը, որը հանդիսանում է տվյալ ընկերության քաղաքաշտպանության շտաբի պետը, պարտավոր է պատերազմի ժամանակ մի շարք խնդիրներ կարգավորել, պլանով առաջնորդվել: Մարտունու ոստիկանությունը գործ է հարուցել այս հարցով ու Արթուր Չարգարյանին տուգանք է նշանակել: Դրանից հետո համաներման ակտ է արձակվել, որի հիման վրա տուգանքը ներվել է: Բայց համաներման ակտը չի նշանակում, թե ինքն անմեղ եմ», - նշել է Ռ. Ավանեսյանը:

Արթուր Չարգարյանի լիազոր ներկայացուցիչ, փաստաբան Դավիթ Յուզյանի խոսքով՝ դատարանի որոշումը չկատարելը հղի է ծանր հետեւանքներով, քանի որ նմանատիպ գործողությունները հարված են մեր պետականությանը: «Պետական իշխանությունն ունի երեք թեւ՝ դատական, գործադիր եւ օրենսդիր: Եթե դատական իշխանության իրավագործության շրջանակում կայացված վճիռը չի իրականացվում, այն էլ պետական պաշտոնյայի կողմից, դա հանգեցնում է ամենաթափուրջ: Ընդհակառակը, պետական պաշտոնյաները պետք է քաղաքացիներին աջակցեն, նրանց իրավունքների պաշտպանությանը նպաստեն, ոչ թե քաղաքացին դատարանով իր իրավունքները վերականգնի, իսկ պաշտոնյան հրաժարվի դա իրականացնելուց», - նշել է Դավիթ Յուզյանի խոսքով:

«Համաձայն ԱՀ քրեական օրենսգրքի 379-րդ հոդվածի՝ դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում պետք է պետական պաշտոնատար անձը դատարանի վճիռն ի կատար ածի: 20-ից ավելի անձ է ազատվել աշխատանքից, սակայն դատարան դիմել են 10-ից ավելին: Իմ վարույթում կան դպրոցի տնօրենների գործեր, ովքեր արդեն վերականգնվել են աշխատանքի եւ իրենց չաշխատած ամիսների հարկադիր պարապուրդը պիտի ստանան: Սակայն Մարտունու վարչակազմի ղեկավարը հրաժարվում է դատարանի վճիռն ի կատար ածելուց, այն վճիռը, որն անցել է Առաջինից մինչեւ Գերագույն ատյանի դատարան ու մնացել է անփոփոխ», - շեշտել է փաստաբանը:

Իսկ ինչ վերաբերում է պատերազմական գործողությունների մասնակցությունից խուսափած անձանց, ապա, ըստ Դ. Յուզյանի, նրանք պետք է դատվեն «Չինսպարտությունից խուսափելու մասին» հոդվածով: Իսկ պատերազմին չմասնակցելու կամ թերի մասնակցելու համար աշխատանքից ազատելն անընդունելի է: «ԱՀ նախագահը 2020թ. հոկտեմբերի 14-ին կարգադրություն էր արել, որով թույլատրել է կանանց, երեխաներին եւ 58 տարեկանից բարձր տղամարդ-

կանց լքել Արցախը: Եթե քաղաքացիները լքել են հանրապետությունը, իրենք դրա համար մեղավոր չեն, ցանկացած մարդ ուզում է ապրել: Սահմանը փակելին, չլքեին: Պետական բարձրաստիճան այրերի վրա է դրված սահմանը փակելու պարտականությունը: Ծիշտ չէ ժողովրդի ուշադրությունը շեղել մի քանի ցածր պաշտոն ունեցող անձանց վրա, փորձել մարդկանց «աչքերին թոզ փչել», պատերազմում պարտության մեղավորները ռազմավարություն մշակողներն են, առաջնային պատասխանատուները», - նշել է փաստաբանը:

Գառնիկ Ղահրամանյանի գործով էլ բողոք ներկայացնող կողմը՝ դպրոցի տնօրենը, չէր ներկայացնել նիստին: Հայցվորի խոսքով՝ վարչակազմը ճնշում է գործադրել, որ նա բողոքը ներկայացնի:

Հայցվորի փաստաբան Միրա Ղահրամանյանն էլ տեղեկացրել է, որ գործով կայացած ընդհանուր իրավասության առաջին ատյանի նիստի ժամանակ տնօրենն իր տված ցուցմունքում նշել է, որ վստահությունը Ղահրամանյանի նկատմամբ չի կորցրել, իրեն ստիպել են, որ աշխատանքից ազատման հրաման արձակի: «Վարձադրությամբ իրավունք չկա անձին աշխատանքից հեռացնել, հիմքը հանդիսանում է հրամանը: Հրամանի մեջ գործատուն պարտավոր է նշել աշխատանքային օրենսգրքի համապատասխան հոդվածը», - նշել է Մ. Ղահրամանյանը՝ նկատի ունենալով ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի կարգադրությունը, որը հիմք ընդունելով՝ տնօրենն աշխատանքից ազատման հրաման էր ստորագրել:

Գառնիկ Ղահրամանյանի՝ ընդդեմ «Քարահունջ հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու եւ հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի հա-

ա) 1968թ. ծնված Գ.Մ.-ն Արցախի Հանրապետությունից բացակայել է 2020թ. հոկտեմբերի 27-ից մինչեւ նոյեմբերի 11-ը, 17.08.2020թ. տարել է սրտի վիրահատություն, առկա էր անաշխատունակության թերթիկ, ԱՀ տարածքը լքել էր ԱՀ պարտի թույլտվությամբ, ինչպես նաեւ բժշկի կողմից ցուցված էր երկարատեւ բուժում,

բ) 1958թ. ծնված Հ.Ա.-ն ԱՀ-ից դուրս էր եկել 08.11.2020թ.-ին եւ վերադարձել 11.11.2020թ., ՀՀ քաղաք Երեւան մեկնել էր վիրավորված փեսային տեսակցելու համար,

գ) 1963թ. ծնված Մ.Ա.-ն Արցախի Հանրապետությունից դուրս էր եկել 27.10.2020թ. եւ վերադարձել 15.11.2020թ., երրորդ կարգի հաշմանդամ է, տառապում է ինսուլինապահանջի ձեւով շաքարային դիաբետով, ԱՀ առողջապահության նախարարի կողմից ուղեգրվել էր Երեւանի «Աստղիկ» ԲԿ՝ սրտի աորտակրոնար շունտավորումից հետո բուժօգնություն անցնելու համար,

դ) 1960թ. ծնված Լ.Տ.-ն ԱՀ-ից բացակայել էր 2020թ. հոկտեմբերի 18-24-ը՝ մարտական դիրքում գտնվող փեսայի ընտանիքը ՀՀ քաղաք Երեւան տեղափոխելու համար, ինչպես նաեւ 2020թ. նոյեմբերի 4-12-ը՝ վիրավորված մյուս փեսային Երեւան ուղեկցելու եւ դատերեքիաներին խնամելու նպատակով,

ե) 1960թ. ծնված Վ.Ղ.-ին աշխատանքից ազատելու մասին վարչական ակտում բացակայում է նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու որոշումը իրավական հիմք եւ պատճառ, Մարտունու շրջանի վարչակազմը դատարանին չի ներկայացրել որոշում ապացույց այն մասին, որ Վ.Ղ.-ն չի կատարել իր պարտականությունները կամ տրված հանձնարարականները կամ երեք օր անընդմեջ առանց հարգելի պատճառի չի ներկայացնել աշխատանքի կամ լքել է ԱՀ տարածքը, աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու կապակցությամբ Վ.Ղ.-ից բացատրություն չի ստացվել:

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի հիշյալ դատական ակտերը Մարտունու շրջանի վարչակազմի կողմից բողոքարկվել է ԱՀ վերաքննիչ դատարան, որի քննության արդյունքում կայացվել են բողոքը մերժելու մասին որոշումներ: ԱՀ վերաքննիչ դատարանի որոշումների դեմ Մարտունու շրջանի վարչակազմի կողմից բերվել են վճռաբեկ բողոքներ, որոնք դատարանի որոշմամբ վարույթ չեն ընդունվել:

Այդպիսով, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անօրինական են ճանաչվել Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավարի՝ վերոհիշյալ կազմակերպությունների տնօրենների պաշտոնից ազատելու մասին վարչական ակտերը, ինչպես նաեւ սահմանվել է նրանց պատճառված գույքային վնասի հատուցման պարտականություն, որի չափը կազմելու է բավականին մեծ գումար:

Նկատի ունենալով, որ Մարտունու շրջանի վարչակազմը չի կատարել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պահանջը, վերոհիշյալ կազմակերպությունների տնօրենների կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ, որոնց կապակցությամբ նույնպես հարուցվել են քրեական գործեր, ԱՀ քննչական կոմիտեի քննիչի կողմից տարվում է նախաքննություն:

Վերոգրյալի հիման վրա ԱՀ դատախազությունը մեկ անգամ էսո հայտարարում է՝ ԱՀ-ում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունները տարանջատված են, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել Սահմանադրությամբ եւ օրենքներով իրենց վրա դրված պարտականությունները, Արցախի Հանրապետության սահմանադրական ինստիտուտների անշեղ գործողությունն ու պետականության անսասանելիությունն ապահովելու գիտակցումը պետք է լինի յուրաքանչյուր պաշտոնատար անձի ծառայողական եւ արտածառայողական վարքի ու գործունեության առանցքը, անընդունելի են երկխոսության եւ Արցախի Հանրապետության ներքին ու արտաքին վարկանիշի անսակարկելիության կարեւորության ներկայացման փոխարեն հակադրական հոլովներն ու մտահոգությունները սուբյեկտիվ նպատակներով օգտագործելու բոլոր դրսևորումները», - ասվում է ԱՀ դատախազության տարածած հաղորդագրության մեջ:

S. ՄՐԱՋԱՆՅԱՆ



«Ոսկե արծիվ» շքանշանակիր Ալբերտ Հովհաննիսյան

44-օրյա պատերազմի օրերին շատերին է ոգեւորել, հույս ներշնչել հրետանավոր Ալբերտ Հովհաննիսյանի լուսանկարը, ով իր ամբողջ էությունը միաձուլվել էր հրետանուն, դարձել մի ամբողջություն ու կարծես կտրված իրեն լուսանկարող անձնակազմից, շրջապատի իրականությունից՝ կրակում, այնուհետև արկերի պայթյուններից սեւացած մատներով անվրոզվ խնձոր էր ուտում: Լուսանկարն իրոք դարձել էր պատերազմի եւ բանակի խորհրդանիշը: Այդ օրերին համայն հայությունը հաղթանակի հավատով էր լցված, եւ 19-ամյա Ալբերտի լուսանկարն այդ ծանր հաղթանակի խորհրդանիշը կարող էր դառնալ:

Սակայն, երբ հոկտեմբերի 8-ին Ալբերտի հայրը հայտնեց ցավալի լուրը, կարծես հենց այդ օրվանից խաբխիվեց հաղթանակի հավատը: «Իմ որդին՝ Ալբերտ Հովհաննիսյանը, ում լուսանկարն այս օրերին լայն տարածում գտավ ողջ աշխարհում եւ հարազատ դարձավ շատերի համար, անմահացավ: Անչափելի ու անհատակ է իմ ու իմ ընտանիքի ցավը: Օրեր շարունակ նրանից որբեւ տեղեկություն չունեինք, բայց շատերը մեր ըն-



տանիքի հետ էիք՝ ձեր ներկայությամբ, խոսքով, աղոթքներով, բայց ... այլ բան էր կանխորոշված: Կոկորդա խեղդող արցունքների միջից ուզում եմ ինչդել, որ բոլորիդ հիշողություններում Ալբերտը մնա հավերժ երիտասարդ, անսահման լավատես, չափազանց հայրենասեր, ով մեծ երազանքներ ու շատ անելիքներ ուներ եւ ում մեծագույն սերը Հայրենիքն էր: Վիշտու ծանր է ու մեծ, բայց հպարտությունս ավելի մեծ է, որ հայրենասեր հայի, մերօրյա իրական Յերոսի հայրն եմ: Փիտակցում եմ՝ իմ Ալբերտը միայն իմ Յերոսը չի, նա բոլորիս Յերոսն է, նաեւ ներկա ու ապագա սերունդների Յերոս հայի օրինակ, ով իր հերոս նախնիների ճամփան բռնեց եւ անմահացավ... Փա՛ռք մեր հերոսներին»,- գրել էր Ալբերտի հայրը՝ Արտակ Հովհաննիսյանը, ով որդու մահից հետո իր անձնական մեքենան սփռել է Հայոց բանակին:

Որդու հետ նա վերջին անգամ խոսել էր սեպտեմբերի 28-ի գիշերը՝ լույս 29-ին, հայտնել է, որ բոլոր ալիքներով իրեն եւ ցույց տալիս, բայց Ալբերտը չուրախացավ այդ լուրից:

«Ճիշտն ասած, պատերազմի օրերին մի երկու անգամ եմ խոսել նրա հետ: Վերջին անգամ տրամադրությունը նորմալ էր. ի՞նչ պիտի լիներ պատերազմի օրերին: Ուղղակի իր ուժեղ ձեռքով ինքը փորձում էր մեզ հանգստացնել. ասաց, որ հոգևոր է, հետո կխոսեք, այնինչ ինքը մի երկու-երեք գիշեր չէր քնել ու այդ ամբողջ ընթացքում հրետանուց այն կողմ չէր գնացել»,- «Ապառաժ»-ի հետ գրույցում նշել է Արտակ Հովհաննիսյանը:

Ալբերտը մինչ ծառայության անցնելը մեկ-երկու անգամ եղել է Արցախում, իսկ ծառայության ընթացքում ուրախ էր ու տրամադրված, իր խոսքի մեջ միշտ ասում էր՝ երբ պատերազմ լինի, մենք կհաղթենք:

«Իր համար Արցախ աշխարհն ամեն ինչ էր: Ինքը շատ բան գիտեր Արցախի մասին ու ուզում էր, որ Արցախը Հայաստանի հետ կապված լինի»,- իր խոսքում նշել է Արտակ Հովհաննիսյանը:

Ընտանիքով վերջին անգամ Ալբերտի ծննդյան տարեդարձին՝ սեպտեմբերի 15-ին էին Արցախում: «Անգամ այդ օրը ես իր հետ խոսեցի պատերազմի մասին: Ինքն ասաց, որ մենք ամենաուժեղն ենք, մեզ հաղթել չի լինի. ասում էր՝ Բաքվում թեյ ենք խմելու»,- պատմում է հերոսի հայրը: Նա պատերազմից հետո ապրում է միայն Ալբերտով: Մինչև պատերազմը սոցիալական ցան-

ցերում ակտիվ չէր, հիմա հանրությունն ու շրջապատը մեծ հետաքրքրությամբ են հետեւում նրա արտահայտած կշռադատված մտքերին:

Չինակից ընկերները Ալբերտին բնորոշում են որպես կիրթ, ընկերասեր, սկիզբված եւ հոգով ու մարմնով ուժեղ անձնավորություն: Ալբերտ Հովհաննիսյանի հրամանատար Մնացական Ավետիսյանն իր հարցազրույցներից մեկում նշել է, որ Ալբերտն առանձնանում էր մարդկային շատ բարձր հատկանիշներով, ընկերասեր էր, պատասխանատու, իր գործին հատուկ մոտեցմամբ: Բնավորությամբ շատ խիստ էր, պահանջկոտ, չէր կարողանում տանել անարդարությունը, պաշտպանում էր թույլերին:

խոսելով պատերազմական օրերի մասին՝ հրամանատարը հիշում է. «Լինելով չորրորդ հաշվարկի հրամանատար, ամբողջ նախաձեռնողականությունը վերցնում է իր ձեռքը ու «Հրանդանները լիցքավորել» հրամանից հետո պատրաստականությունն առաջին ինքն է զեկուցում ու առաջին կրակոցն էլ ինքն է կատարում: Արկը 21 կգ է կշռում, ու 300-320 արկ Ալբերտը կարողացել է այնպես անել, որ կրակոց լինի, անընդհատ բերել լիցքավորել, այնքան ուժ ու եռանդ է ունեցել, որ երկու-երեք օր մի վայրկյան էլ չի քնել»,- նշել է Մնացական Ավետիսյանը:

Ալբերտ Հովհաննիսյանը ծնվել է 2001 թվականի սեպտեմբերի 15-ին Երեւան քաղաքում: 2004-2007 թվականներին սովորել է Զանաքեռ-Չեյթուն համայնքի թիվ 5 մանկապարտեզում: 2006-2012 թվականներին հաճախել է Արաբկիր մարզադպրոց եւ զբաղվել դուբլենդ կարատեով: Արժանացել է սեւ ու կարմիր գոտիների: 2007-2012 թվականներին սովորել է Երեւանի Հակոբ Պարոնյանի անվան թիվ 59 հիմնական դպրոցում: 2012-2015 թվականներին սովորել է «Զվանտ» վարժարանում: 2015-2016 թվականներին սովորել է Լեւ Տոյստոյի անվան թիվ 128 դպրոցում, 2016-2018 թվականներին՝ Զերացու անվան ավագ դպրոցում: 2018 թվականին ավագ դպրոցին զուգահեռ սովորել է Հայ-ռուսական համալսարանի նախապատրաստական կուրսում: 2019 թվականին ընդունվել է Նույն համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետում:

2020 թվականի հունվարի 13-ին գորակոչվել է հայկական բանակ: Եղել է կրտսեր սերժանտ:

Արժանացել է երկու շքանշանի՝ ՊՆ հրետանու 3-րդ դասային կարգի մասնագետի եւ հրետանավորի: Չոհվել է 2020 թվականի հոկտեմբերի 8-ին: Հուղարկավորվել է Եռաբլուր գինավորական պանթեոնում:

2021 թվականի հոկտեմբերի 19-ին՝ Հրետանավորի օրը, Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրի համաձայն՝ հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում Արցախի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների, ցուցաբերած մասնագիտական սիրանքի համար Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի N գորամասի Դ-30 հրետանային դիվիզիոնի 2-րդ հրետանային մարտկոցի 4-րդ հրանդանի հրամանատար, կրտսեր սերժանտ Ալբերտ Արտակի Հովհաննիսյանը հետմահու արժանացել է Արցախի հերոս բարձրագույն կոչման:

Հունվարի 13-ին ֆեյսբուքյան էջում Արտակ Հովհաննիսյանն այսպիսի գրառում էր արել. «Անցյալն ու կատարվածը փոխելու անհնարիությունը գիտակցելով անգամ՝ անընդհատ մտածում ես «Եթե»-ների մասին: Ու եթե չլինեք չարաբաստիկ պատերազմը, այսօր Ալբերտս հայրենիքի առաջ գինավորական իր պարտքը կատարած կվերադառնար ու կչերմաներ իր տունը, որտեղ հիմա հերոս որդի ունենալու սառը հպարտությունն է:

Հ. Գ. Վստահ եմ, հողն իր արյան կանչով ի վերջը հաղթելու է դիվանագիտական խաղերին ու իր իրական տերերի ուղբերի տակ է հայոց հողն ամրանալու: Միակ անդամների կորուստը մեր երիտասարդներն էին, Ալբերտս...
Չներես տղես ինձ»:


Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Հաղթանակի կարեւորագույն պայմանն անմնացորդ սկիրումն է, ազնիվ ու վճռական պայքարը. Պետրոս Ղեւնոյան

Հաղթանակի կարեւորագույն պայմանն, ինչպես բազմիցս նշում էր Պետոն, անմնացորդ սկիրումն է, ազնիվ ու վճռական պայքարը: Ոչինչ չարժե այն գինավորականը, թեկուզ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանած եւ ավարտած, եթե չունի սկիրվածություն, մարտական ոգի, կռիվներ վարելու, արագորեն կողմնորոշվելու եւ համապատասխան վճիռներ կայացնելու մտավոր կարողություն եւ վճռականություն:

Հունվարի 30-ին լրացել է Արցախյան առաջին պատերազմի առաջամարտիկ ու հերոս, Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար, ՀՀ Պաշտպանության գաղափարակիր ընկեր Պետրոս Ղեւնոյանի ծննդյան 58 ամյակը:

Ծնվել է 1964 թվականի հունվարի 30-ին, ՀՀԱՀ Նաիրիի շրջանի Պողոսյան գյուղում: Եղել է Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարի տեղակալը, Պողոսյանի կամավորական ջոկատի փոխհրամանատարը: 1990-1994 թթ. մասնակցել է Հայաստանի սահմանամերձ շրջանների ու ԼՂՀ ինքնապաշտպանական եւ ազատագրական մարտերին: 1990 թվականից Պողոսյանի կամավորական ջոկատի հրամանատարի տեղակալ, Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար մասնակցել է Տավուշի, Նոյեմբերյանի, Չանգեզուրի, ԼՂՀ Շահումյանի, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հաղորուի շրջանների ինքնա-



պաշտպանական եւ Աղդամի, Ֆիզուլու, Կուրբաթլուի, Ջաբրայիլի, Զարվաճառի շրջանների ու Քետաշենի ենթաշրջանի ազատագրական մարտերին:

1992թ. Նոյեմբերի 1-ին կազմավորվեց Շուշիի առանձնակի գումարտակը: Պետոն նշանակվեց նա փոխհրամանատար: 1993թ. հունվարին Սիսիանից ուղևորվեց ԽՂՀ-ում խիստ թշնամու գերծայնային «Միգ-25» ինքնաթիռը, ինչի համար Արցախի բանակից ստացած գումարը փոխանցեց գոհված ընկերների ընտանիքներին:

Որ ճակատում էլ եղավ Պետոն, որ մարտին էլ որ մասնակցեց, մշտապես մնաց նույն հոգատար ընկերն ու հրամանատարը, համեստ ու լրակազմ գինվորը:

«Բարեւ հարգելի ընկեր Հրանտ: Երեւանից ստացված լուրերը տղերքը պայթեցիկի գորությամբ են ընդունում: Այդ քաղաքական ինտրիգաներին ու «վայ» հայրենափոխիչներին մի կերպ համոզիր, ուղարկիր այստեղ: Մի քիչ քրիստոնյա, մի քիչ հայ դարձնենք: Կդարձնենք, գիտես: Տղերքը այստեղ արյուն ու քրտինք են թափում եւ ուզում են համոզված լինեն, որ իզուր չէ այս ամենը: Որոշները վիստովում են, բայց հին տղերքը կանգնած են: Մխիթարվում են, որ Ասկըրանյի նման լուսավոր մարդ կա աշխարհում: Արթուրն ու Երիկը, Մարտակերտի Նորիկն ու Ռադիկը, որպես պահապան սյուն պահում են տղերքին: Իրարով մխիթարվում ենք: Ասկըրանյի մոտ ունենք 56 հոգի, 42 հոգի Հաղորություն, եւ վերջին մեկ ամսում բավականին կորուստներ ունեցանք: Ձեռքերս դողում են, երբ նայում եմ գոհվածների եւ վիրավորներին ցուցակներին: Այդտեղ կամ թե եվրոպայներում ինչ շահարկումներ են տեղի ունենում՝ մեր գործը չէ. մենք, գիտես ընկեր Հրանտ, միչէն վերջ կռվելու ենք, չենք թողնելու, որ պակը դառնա խարամ: Խմբերին ուղարկեք իրենց հանդերձանքով:

Եհ՛, ի՞նչ ասեմ, ցտեսություն ընկեր...»:

1994 թ. հունվարին Պետոն փոքր խմբով անցնում է Զարվաճառ՝ Օմարի լեռնանցք՝ տեղի պաշտպանական ջոկատներին օգնելու նպատակով: Նա մշակում էր իր գումարտակով իրականացնում է լեռնանցքի ազատագրման ծրագիրը:

Չոհվել է 1994 թ. փետրվարի 14-ին Զարվաճառում: Այդ օրը մարտի դաշտում վիրավոր գինվոր էր միայնակ մնացել: Շտապօգնության մեքենայի անձնակազմը չէր համարձակվում առաջ շարժվել, քանի որ թշնամին ականապատել էր ճանապարհը: Պետոն ինքն է նստում շտապօգնության մեքենայի դեկին եւ միայնակ դուրս բերում վիրավոր գինվորին: Նա գոհվում է ականի պայթյունից:

Պետոյի անունն են կրում Եղեգնուտի եւ հարազատ Պողոսյանի դպրոցները: 2010 թվականի ապրիլի 10-ին Զաշաթաղի շրջանի Տիգրանավան գյուղի միջնակարգ դպրոցն անվանակոչվել է Պետրոս Ղեւնոյանի անվամբ: 2007թ. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում, որտեղ սովորել է Պետրոսը, նրա անունը կրող լսարան է բացվել: 1994 թ. լույս է տեսել Համլետ Գետրոյանի «Պետոն» գիրքը:

1996թ. Պետոյին հետմահու շնորհվել է ԼՂՀ ՊԲ մայրիկ կոչում: 2001 թ. Պետրոս Ղեւնոյանին շնորհվել է Արցախի հերոսի կոչում: Պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի եւ «Ոսկե արծիվ» շքանշաններով:

ՀՀ Արցախի երիտասարդական միության ամանորյա նախաձեռնությունը՝ Արցախի մանուկների համար



Պատերազմն Արցախում, մի տարուց ավել է, ինչ ավարտվել է: Եվ կյանքը կարծես թե նորից ընթանում է իր հունով: Սակայն դա միայն առերևույթ է այդպես: Պատերազմը չի ավարտվել: Այն խաթարել է ոչ միայն մեծերի կյանքը, այլև տխուր երանգներ է ավելացրել մանկության գույների ներկայականում: Արցախում, ի հեծուկս բազմաթիվ խնդիրների է վտանգների, շարունակվում է կյանքը, ու իրենց մանկության օրերն են ապրում հազարավոր երեխաներ: Նրանց մանկության գույների ներկայակակից տխուր երանգներն անհետացնելու և այն գունավոր դարձնելուն էր ուղղված ՀՀ Արցախի երիտասարդական միության հերթական ամանորյա նախաձեռնությունը:

Ամանորին ընդամառ՝ ՀՀ ԱՄՆ-ը հայտարարել էր «Նվիրի՛ր ուրախ Ամանոր Արցախի փոքրիկներին» խորագրով ծրագրի մեկնարկի մասին, որի նպատա-

կը Արցախի սահմանամերձ գյուղերի երեխաներին նվերների միջոցով ուրախություն և ամանորյա տրամադրություն պարգևեցին էր:

Միությունը հիմնականում փորձում էր ծրագրում ընդգրկել Արցախի սահմանամերձ և թիրախային համայնքները: Զանի որ ՀՀ-ի ուղեկից կառույցների՝ Հայ օգնության միության Արցախի միավորի և Համագայինի հայ կրթական և մշակութային միության Արցախի գրասենյակի կողմից նվերներ էին բաժանվել Արցախի մի շարք գյուղերի ավելի քան 3000 երեխաների, ՀՀ ԱՄՆ-ն էլ որոշել էր ընտրել այս շարքից դուրս մնացած համայնքները: ՀՀ ԱՄՆ-ի վարչության որոշմամբ ընտրվել են Մարտունու շրջանի Աշան, Եմիշճան, Զաշաթաղի շրջանի Բերձոր, Ասկերանի շրջանի Կարմիր գյուղ, Ներքին Ազնեք, Խաչեն, Խնձրիստան, Ծաղկաշատ, Ռեւ, Մարտակերտի շրջանի Վանք, Չար-

դախաչ և Զլդրան համայնքները, որտեղ էլ բնակվող ավելի քան 600 երեխաների տրամադրել ենք ամանորյա գեղեցիկ և հաճելի նվերներ, որոնք անասելի հրճվանք են պարգևել մանուկներին:

Հատկապես կարեւոր էր միության անդամների կողմից սահմանամերձ Ազնեքում ապրող միակ երեխային՝ Մանենին այցելությունը, ում համար պատերազմը չի ավարտվել, որովհետեւ ամեն օր քնում է արթնանում է գյուղից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորությամբ տեղակայված թշնամու անկանոն կրակահերթերի տակ, որովհետեւ գյուղում չկա նախկին աշխուժությունը, որովհետեւ այլևս գյուղում չեն ապրում Լարեն ու Մերին, ում հետ խաղում էր նախքան պատերազմը, որովհետեւ սիրելի խաղը՝ ֆուտբոլը, ստիպված խաղում է ծնողների հետ, որովհետեւ, իսկապես պատերազմը չի ավարտվել...

Մանեն քաղաքում ապրել չի ուզում, չի սիրում: Մանեն արդեն ոչ միայն չի վախենում թշնամու կրակոցներից, այլև մորն է հորդորում չվախենալ: Նա չի հասկանում՝ ինչու՞ վախենալ, թող թուրքն իրենցից վախենա, վախենա իր անվախությունից ու համառությունից:

Կարեւոր էր նաև Բերձորում ապրող երեխաներին այցելությունն ու նրանց ոգեւորելը, որովհետեւ նրանք ամեն օր ականատես լինելով թշնամու շարասյուներին, շարունակում են

ապրել Բերձորում՝ այն հայկական պահելով:

Ծրագրին կարող էին մասնակից դառնալ բոլորը՝ նվիրելով իրենց նվերը սահմանամերձ գյուղերի փոքրիկներին: Հատկանշական է, որ այս կոչին միացել էին նաև տասնյակ արցախցի երեխաներ, ովքեր իրենց հասակակիցների համար պատրաստել էին նվերներ: Այս ծրագրի շնորհիվ փորձ արվեց երեխաների շրջանում տարածել նաև նվիրելու, ոչ միայն իրենց, այլև իրենց հասակակիցների մասին մտածելու մշակույթը:

Ծրագրի իրականացմանն աջակցել են ՀՀ ԱՄՆ Արեւելյան շրջանի երիտասարդական միությունը, Հայ օգնության միու-



թյունը, Իրանի «Թեւանիկ» բարեփրական խումբը, Զաթարի «Մեսրոպյան» ազգային վարժարանի աշակերտները:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այն բարձր արժեհամակարգը, որի տեր դառնում են ՀՀ ԱՊՄ-ին անդամակցող պատանիները, պետք է վարակիչ դառնա բոլորի համար

ՀՀ Արցախի պատանեկան միության աշխատանքները տարաբնույթ են՝ խմբային հավաքներ, դասախոսություններ, արշավներ դեպի պատմամշակութային և տեսարժան վայրեր, բանակումներ, ճամբարներ, մարզական և մտային մրցաշարեր, ազգային երգ ու պարի ուսուցում, պետական, ազգային և կրոնական տոների նշում, որի նպատակն է՝ խթանել պատանիների բարոյական, գաղափարական, մտային և ֆիզիկական զարգացմանը. նրանց տալ ազգային, քաղաքացիական դաստիարակություն ու կրթություն, խրախուսել առողջ ապրելակերպը և պատրաստել հայապահպանման վսեմ գաղափարներով տոգորված, արի և բարձր նկարագրի տեր անհատներ, պատանիներին փոխանցել կազմակերպական հմտություններ հայ կյանքում պարտականություններ ստանձնելու համար, նրանց մեջ արմատավորել հայրենասիրական և ընկերական ոգին, խորացնել կարգապահության, պարտաճանաչության և անաչառ դատողության գիտակցությունը:

ՀՀ Արցախի պատանեկան միության աշխատանքների արդյունքը հատկապես նկատելի դարձավ Արցախի համար դաժան ու դժվարին օրերին, երբ միության անդամ մի շարք ընկերներ պատերազմի օրերին լծվեցին զինվորներին օգնելու գործին:

Պատերազմից հետո հատկապես ոգեշնչվելով Նժդեհյան «Ապագան վտանգված ժողովուրդների վերջին խաղաթուղթը վերադաստիարակությունն է» գաղափարախոսությամբ, ՀՀ Արցախի պատանեկան միությունը նոր թափով սկսեց իր աշխատանքները: Հետպատերազմյան Արցախում արցախցի պատանիների առօրյա աշխուժացնելու և նրանց պատերազմի ցավոտ հուշերից կտրելու համար ՀՀ Արցախի երիտասարդական և պատանեկան միությունները ՀՀ Լիբանանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի երիտասարդական և ուսանողական միությունների աջակցությամբ կազմակերպել են պատանեկան 9 ճամբարներ Արցախի բոլոր մնացյալ շրջաններում, ավելի քան 1 000 պատանիների մասնակ-



ցությամբ:

2022թ. սկզբի դրությամբ՝ ՀՀ Արցախի պատանեկան միության մասնաճյուղեր գործում են Մարտունի, Վանք, Նորադյուղ, Ասկերան և Ստեփանակերտ համայնքներում, իսկ միության անդամակցում է ավելի քան 100 պատանի:

ՀՀ ԱՊՄ պատանիների առօրյա կազմակերպվում է վարիչների կողմից տարաբնույթ և բազմաբովանդակ դասախոսություններով, ազգային երգ ու պարի ուսուցմամբ, սպորտային և ինտելեկտուալ մրցաշարերով, ժամանցային և հետաքրքրաշարժ խաղերի կազմակերպմամբ, հիշատակի և տոն օրերին կազմակերպվող միջոցառումներով, և, ինչպես պատանիներն են խոստովանում, միությունն աշխուժություն է մտցնում համայնքային կյանքում, որը հատկապես պատերազմից հետո միապաղաղ է դարձել:

Ամանորին ընդամառ՝ ՀՀ ԱՄՆ-ի և ՀՀ Ֆրանսիայի «Նոր Սերունդ» երիտասարդական միության նախաձեռ-

նությամբ Ստեփանակերտում կազմակերպվել էր գեղեցիկ և ուրախ համերգային ծրագիր, որին մասնակից են դարձել նաև ՀՀ ԱՊՄ պատանիները:

Ամանորին ՀՀ ԱՄՆ-ի ընկերները այցելություններ են ունեցել ՀՀ ԱՊՄ բոլոր մասնաճյուղեր, նրանց համար կազմակերպել ամանորյա տոնակատարություններ, իսկ պատանիներն էլ ավագ ընկերներին դիմավորել են տարաբնույթ ներկայացումներով և բեմականացումներով:

Հիշատակության է արժանի հատկապես Վանքի մասնաճյուղի պատանիների պատրաստած թատերական ներկայացումը: Ցավոք, դաժան պատերազմն ու դրանից հետո ստեղծված մռայլ իրականությունն ու չլուծվող խնդիրներն իրենց ազդեցությունն են թողել պատանիների հոգեբանության և մտածողության վրա:

Ըստ ներկայացման սցենարի՝ հայ ընտանիքում Ամանորի գիշերը բոլոր տխուր էին, չկար տոնական տրամադրություն, որովհետեւ պատերազմում անհայտ կորել էր տան զավակը, երեխաների հայրը: Տատիկի առաջարկությամբ՝ ընտանիքի անդամները որոշում են Լամակ գրել Ձմեռ պապիկին՝ հույս ունենալով, որ գուցե այս անգամ Լա կկատարի իրենց երազանքը, այն է՝ որդու տուն վերադարձը: Պատանիների պատկերացմամբ՝ հայրերի համար ամանորյա հրաշքը հենց այս տեսքն ունի, երբ կեսգիշերին Ձմեռ պապիկը տուն է մտնում կորած որդու հետ միասին և ուրախություն բերում ընտանիքին:

Պատանիների այս նվիրական երազանքները երանի իսկապես իրականություն դառնային այն բոլոր ընտանիքներում, որտեղ կա սպասում:

Այս բարձր արժեհամակարգը, որի տեր դառնում են ՀՀ ԱՊՄ-ին անդամակցող պատանիները, պետք է վարակիչ դառնա բոլորի համար: Ի վերջո, այս պատանիներն են, որ ապագայում որպես երիտասարդներ պետք է տեր կանգնեն իրենց հայրենիքին:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախի մարզիկների արձանագրած ցուցանիշները կարելի է գերազանց գնահատել

Հաշվի առնելով հետպատերազմյան շրջանը, երբ առնվազն մի քանի ամիս մարզումներ չեն իրականացվել, նաև՝ այն հանգամանքը, որ կորուսված իրավունքներն համավարակի տարածվածությամբ պայմանավորված՝ գրեթե չեղարկված էին բոլոր միջազգային, հայաստանյան եւ տեղական միջոցառումները, 2021թ.

ժամանակ դառնում է նաև ՀՀ սպորտի վարպետ»,- նշել է սպորտի վարչության պետը:

Նա առանձնացրել է մի շարք մարզիկների անուններ եւս:

Այս տարվա առաջին կիսամյակում գրանցված ամենաբարձր ցուցանիշը Սամբոյի Եվրոպայի առաջնությունն է, որտեղ շուշեցի մարզիկ Դավիթ Յուզեֆյանը եզրափակիչում հաղթելով Ադրբեջանը ներկայացնող մարզիկին, դարձավ Եվրոպայի չեմպիոն:



Դավիթ Յուզեֆյանը մայիս ամսում Կիպրոսի Լիմասոլ քաղաքում մասնակցելով սամբոյի Եվրոպայի, իսկ հոկտեմբեր ամսում՝ Հունաստանի Սալոնիկ քաղաքում պատանիների եւ երիտասարդների աշխարհի առաջնություններին, գրավել է համապատասխանաբար 1-ին եւ 3-րդ մրցանակային տեղերը:

Արթուր Առուշանյանը Լեհաստանի Կրակով եւ Սվինոույսցե քաղաքներում մասնակցելով կիոկուշին կարատեի աշխարհի (KWF) 3-րդ եւ Եվրոպայի 34-րդ (KWU) առաջնություններին՝ գրավեց համապատասխանաբար 1-ին եւ 3-րդ մրցանակային տեղերը՝ դառնալով աշխարհի քառակի չեմպիոն:

Միխայիլ Միխայրյանը հոկտեմբեր ամսում Սերբիայի Բելգրադ քաղաքում մասնակցեց ավանդական կարատեի (ETKF) 35-րդ Եվրոպայի առաջնությանը, գրավեց 1-ին մրցանակային տեղը:

Յուրի Կարոզյանյանը նոյեմբեր ամսում Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում մասնակցելով սեդոմում հետարանից վարժության Եվրոպայի առաջնությանը՝ գրավեց 1-ին մրցանակային տեղը, իսկ դեկտեմբերին ուժային եռամարտի ՀՀ առաջնության ժամանակ 285,5կգ արդյունքով կքանիստ վարժությունում գրանցել է ՀՀ ռեկորդը:

Խոսելով ՀՀ առաջնություններում խաղային մարզածներում գրանցած հաջողությունների մասին՝ Դանիել Սկրտչյանն առանձնացրել է մինչեւ 16 տարեկան աղջիկների բասկետբոլի հավաքական թիմի արդյունքը: Մասնակցելով ՀՀ կանոնավոր առաջնությանը՝ թիմը գրավեց 1-ին մրցանակային տեղը:

«Դրական առաջընթաց է նկատվում պատերազմի կամ դժբախտ պատահարների հետեւանցով ֆիզիկական արատ ունեցող մարզիկների ինտեգրման ուղղությամբ: Ալեքսանդր Մովսեսյանը Ռուսաստանի Բուխարեստ քաղաքում մասնակցելով Հայաստանի պաշտպանության աշխարհի 42-րդ առաջնությանը՝ լսողական խանգարումով մարզիկներ դասակարգումով՝ գրավել է 3-րդ մրցանակային տեղը»,- տեղեկացրել է Դանիել Սկրտչյանը:

Ներկա իրավիճակում պետք է ավելի զարգացնենք մենայայնարարի մարզածները

Արթուր Առուշանյանը Լեհաստանի Կրակով քաղաքում կայացած Կիոկուշին կարատեի KWF աշխարհի առաջնությունում կլածել է 70 կգ քաշային կարգի բոլոր գոտեմարտերը եւ դարձել աշխարհի ջառակի չեմպիոն: Նա նաև առաջնության լավագույն մարզիկի կոչմանն է արժանացել:

28-ամյա մարզիկը այդ առաջնությանը նաեւ մարզիկ կարգավիճակով էր մասնակցում: Արթուրի սաներից Արեն Կարապետյանը 16-17 տարեկանների 60 կգ քաշային կարգում նվաճել է բրոնզե մեդալ, իսկ Արտյոմ Մաքսյանյանը 14-15 տարեկանների 75 կգ քաշային կար-

գում դարձել է արծաթե մեդալակիր:

«Ապառաժ»-ի հետ զրույցում անվանի մարզիկը նշել է, որ այդ առաջնությունն առանձնանում էր նախ նրանով, որ կորուսված իրավունքի համավարակից հետո առաջին անգամ է Կիոկուշին մարզածներում աշխարհի առաջնություն անցկացվում, նաեւ այն առաջին էր Արցախյան վերջին պատերազմից հետո:

«Վերջին երկու տարվա ընթացքում մեր ապրած ցավից, դժբախտությունից հետո առաջին աշխարհի առաջնությունն էր: Աշխարհի առաջնությունները հիմնականում կազմակերպվում են առանձին՝ պատանիների եւ մեծահասակների համար, եւ ամեն անգամ մրցագորգ են դուրս գալիս կամ որպես մարզիկ, կամ որպես մարզիչ: Այս դեպքում, կարելի է ասել, մեջտեղից կիսվում էի, որովհետեւ եւ տղերքն էին պայքարում, եւ ես պետք է մենամարտեի»,- նշել է Արթուր Առուշանյանը:

Խոսելով պատերազմից հետո իրենց գրանցած արդյունքների մասին, Արթուր Առուշանյանը շեշտել է, որ դրանք անհատական չեն: «Մեր հաղթանակները նվիրում ենք մեր տղաներին, ովքեր իրենց կյանքը գոհաբերեցին հանուն գաղափարի, հանուն Արցախի, հանուն հայ ազգի: Սա միայն մեր հաղթանակը չէ, բոլորի հաղթանակն է»,- կարծում է աշխարհի քառակի, Եվրոպայի հնգակի չեմպիոնը:



Արթուր Առուշանյանը, մինչ աշխարհի առաջնությունը, սեպտեմբերին մասնակցել է Եվրոպայի առաջնությանը: «Այնտեղ մրցավարական որոշ սխալների պատճառով պարտվել եմ: Կարելի է ասել, դա էլ մեծ խթան էր, որ ավելի լավ պատրաստվեմ աշխարհի առաջնությանը: Այդտեղ գրավել եմ երրորդ տեղ (KWU վարկածով)»,- նշել է նա: Մարզիկի խոսքով՝ իրենց համար ոգեւորիչ է, որ ամեն անգամ Արցախի անունը շոշափվում է:

«Ադրբեջանը, կարելի է ասել, սեւ փիռով է գեղավորվում: Շատ անգամ դատարան են դիմել, եւ դա հոգուս մեզ է աշխատել: Բոլորն ավելի շատ են իմացել Արցախի մասին, որ հայկական հող է, ինչի համար էր պայքարը, պատերազմը:

Ադրբեջանցիները դեմ առ դեմ խոչընդոտ չեն կարողացել ստեղծել, բայց սեպտեմբերին կայացած Եվրոպայի առաջնության ժամանակ խոչընդոտ էր այն, որ Արցախի գրանցման պատճառով շենգենյան գոտին հրաժարվել էր տալ վիզա: Մի շարք կառույցների ենք դիմել, արդեն մտածում էինք միջազգային դատարան դիմելու մասին, երբ վերջին օրը տեղեկացրին, որ ստացվում է: Եվ թե՛ այսքան դժվարություն հաղթահարելուց հետո ենք գնում, ուրեմն կրկնակին պետք է անենք»,- կարծում է Արթուր Առուշանյանը:

Խոսելով պատերազմից հետո իր սաներին փոխանցվող ուղերձների մասին, նա նշել է, որ ամենաառաջինն այն է, որ ոչ մի հայ, ոչ մի արցախցի իրավունք չունի մեկը մյուսին թշնամականաբար վաշտակ նայել, իրարից նեղանալ: «Միշտ ասում եմ՝

թե՛ թշնամի եք ուզում տեսնել, նա օկուպացված Հուշիում է, բարձրացե՛ք՝ աչքերին նայե՛ք, մյուսները ձեր եղբայրները, ազգակիցներն են, նրանց հետ պետք է լինե՛ք միայն սիրով»,- ասում է մարզիչը՝ ավելացնելով, որ այսօրվա դրությամբ, երբ բոլոր ուղղություններով թշնամին է, պետք է ավելի շատ զարգացնենք մենայայնարարի մարզածները: ոչ միայն տղաները, այլեւ աղջիկները պետք է ինքնապաշտպանվեն, հոգեբանորեն, ֆիզիկապես կոփված լինեն:

Անդրադառնալով մարզիկի կարիերան ավարտելու մասին հարցին՝ նա նշել է, որ դեռեւս նպատակներ ունի, բայց բավականին լուրջ է վերաբերում մարզչական գործունեությանը, ուստի պիտի աննախադեպ տարի լինի:

Մրցակիցս ադրբեջանցի էր, եւ պիտի հաղթեի

Մեծ դժվարությամբ եմ դարձել ՀՀ, այնուհետեւ Եվրոպայի չեմպիոն, քանի որ 44-օրյա պատերազմի մասնակից էի, ժամկետային զինծառայող՝ «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է 2021թ. մայիսին Կիպրոսի Լիմասոլ քաղաքում կայացած սամբոյի Եվրոպայի առաջնության չեմպիոն Դավիթ Յուզեֆյանը:

«Եվրոպայի առաջնության ժամանակ երեք հաղթանակ եմ տարել, հասել եզրափակիչ: Զորորդ մրցակիցս ադրբեջանցի էր: Ադրբեջանցիները մեծ թիմով էին եկել «Հուշ» գործարար շապիկներով, երգերով: Իմ մրցակցիս եղբայրը Հուշի էր «սատկել» ու նա որոշել էր ինձ հաղթել ու այդ շապիկով կանգնել պատվո պատմանդանին: Այդ ամեն ինչն իմանալով՝ ավելի պարտավորված եմ զգացել հաղթել, ու հաղթել եմ»,- նշել է երիտասարդ մարզիկը:

Նա շատ է մասնակցել Եվրոպայի, աշխարհի առաջնությունների ու ադրբեջանցի մրցակիցների էլ էր հաղթել: «Նախկինում մեր կողքով գլուխները կախ էին անցնում, բայց պատերազմից հետո իրենց շատ լկտի են պահում, ուզում են անպայման ընդհարում սարքեն: Ընչու է, եւ Եվրոպայի չեմպիոն դառնալու համար եմ գնացել, բայց ինձ համար դա երկրորդական դարձավ, որովհետեւ մրցակիցս ադրբեջանցի էր եւ պատերազմից հետո պիտի հաղթեի: Պատերազմից հետո Արցախից առաջին մեդալն էր: Դա մեծ պատիվ էր ու պարտավորվածություն»,- ասում է Դավիթը:

Դավիթը 2019թ. ամռանն էր զորակոչվել, պատերազմի մասնակցել է առա-



ջին օրերից: «Հաղորդի մոտակայքում շատ ընկերներ, հարազատներ եմ կորցրել: Մրցումների ժամանակ ու հիմա էլ այդ կրակոցները, գոհերը աչքիս առաջ են: Պիտի կամքի մեծ ուժ լինե՛ր Նորից առաջնություններին մասնակցելու համար, բայց ես իմ մարզիչ Էմմեստ Միրզոյանի հետ մեծ ճանապարհ եմ անցել հոգեբանորեն»,- նշում է մարզիկը:

Հուշիում ծնված եւ մեծացած Դավիթն այնտեղ է թողել նաեւ իր Մեդալները, պատվոգրերը: Ներկայումս մտեփանակվելու էր տատիկի տանն եւ ապրում: Իր խոսքով՝ հիմա ավելի քրտնաջան են պարտապում՝ այն հույսով, որ մի օր հաղթելու ենք եւ Հուշին մերն է լինելու:

Առաջին Հանրապետության հիմնադիրը

Անհար է պատկերացնել նոր ժամանակներում Հայոց անկախ պետականության վերականգնման իրողությունը՝ առանց վերհիշելու եւ արժեւորելու 1879թ. Շուշի քաղաքում ծնված Արամ Մանուկյանի կյանքն ու գործունեությունը: Հայոց պատմության էջերում իբրեւ Հայաստանի Հանրապետության հիմնադիր հավերժացած Արամ Մանուկյանն իր ամբողջ կյանքն անմատչորդ նվիրեց հայ ժողովրդի ազատության վեհ գործին:

Արամ Մանուկյանի գործունեության կարեւոր կողմերից մեկը ազատագրական շարժման խորացմանն ուղղված քարոզչությունն էր:

Արամն ակտիվորեն մասնակցեց Երկիր ուղարկվող զինատար խմբերի կազմակերպմանը, որոնց միջոցով ազգային-քաղաքական ուժերը, ամենից առաջ ՅՅԴ-ն, հույս ունեին նոր թափ հաղորդել ազգային-ազատագրական պայքարին:

Յերոսաբար կռվելով թշնամու գերակշռող ուժերի դեմ եւ տասնյակ անգամ ավելի զոհեր խլելով՝ Սասունին օգնության շտապող զինատար խմբերի մեծ մասը լրիվ կամ մասնակիորեն ջախջախվեց: Նման պայմաններում «Կարսի հնոցում» կռվված Արամը վճռեց անցնել Արեւմտյան Հայաստան եւ տեղում նպաստել ազատագրական շարժման ծավալմանը: 1905թ. փետրվարի 6-ին նա հաստատվեց Վանում՝ նախապես ՅՅԴ ղեկավարությունից ստանալով համապատասխան հրահանգներ, նաեւ՝ որպէս կուսակցության Վանի կենտրոնական կոմիտեի իրավահավասար անդամ գործելու լիազորություն: Կարճ ժամանակ անց ստանձնելով ՅՅԴ Վանի կազմակերպության ղեկավարությունը՝ նա, ելնելով ազատագրական շարժման անցյալից եւ հետամուտ լինելով իր կուսակցության կողմից որդեգրվող պայքարի նոր մարտավարությանը, եռանդուն գործունեություն ծավալեց ընդհանուր ապստամբության համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու, առաջին հերթին՝ Վան գեւը-գինամթերք փոխադրելու ուղղությամբ: Արամը պաշտպանում էր Յրայրի այն գաղափարը, որ եթէ հայերը պետք է ապստամբություն բարձրացնեն, ապա դա պետք է լինի համաժողովրդական՝ նախապատրաստված բազմակողմանիորեն եւ հիմնավոր: Լինելով դաշնակցական գործիչ՝ նա էր խորշում օգտվել Արմենական կուսակցության նախապատրաստական աշխատանքների հարուստ փորձից:

ՅՅԴ գործունեության կարեւորագույն կողմը Երկրում հետագա պայքարի համար գեւը կուտակելն էր: Արամի ղեկավարությամբ ՅՅԴ Վանի կազմակերպությունը նպատակամղված գործունեություն ծավալեց առաջին հերթին այդ ուղղությամբ: Միայն 1906թ. ընթացքում Վան փոխադրվեց ավելի շատ գեւը-գինամթերք, քան նախորդ 15 տարիներին: Արամի ղեկավարության շրջանում ավարտվեց Վանի նահանգում ՅՅԴ-ի ամբողջական հաստատման գործընթացը:


Ձեռնարկվեցին արդյունավետ քայլեր հայության ներքին կյանքին թուրքական կառավարության միջամտությունները կանխելու եւ քրդական շահատակություններին վերջ տալու ուղղությամբ: Թուրքական իշխանություններն առիթը բաց էին թողնում միջամտելու հայերի ներքին կյանքին, որը թանկ էր նստում վերջիններս վրա. նրանք ենթարկվում էին հավելյալ սոցիալ-տնտեսական, ֆիզիկական ճնշման եւ անձնական նվաստացման: Ժողովրդի գլխին պատուհաս էին նաեւ թուրքական դատարանները, որոնք տարիներով ձգձգում էին դատական գործերը եւ դրանք լուծում միայն կաշառքի, ծեծի ու կեղծիքի միջոցով: Կառավարական անտեղի միջամտությունների կանխմանը միտված կարեւորագույն քայլերից էր դատական գործի տնօրինումը ՅՅԴ Վանի կազմակերպության կողմից: Դաշնակցական դատարանները դատերը կատարում էին անվճար, առանց ձգձգումների, տեղական սովորույթների համաձայն:

Արեւմտյան Հայաստանում ծավալած գործունեության առաջին տարիներից Արամն իրեն դրսեւորեց որպէս հետեւողական, կազմակերպչական մեծ ջիղ ունեցող գործիչ: Նրա ղեկավարությամբ իրականացված քայլերի շնորհիվ ՅՅԴ Վասպուրականի կառույցը դարձավ ամենամարտունակ ու հեղինակավոր կազմակերպությունը Արեւմտյան Հայաստանում: Նրան վարկա-

բեկելու եւ հեղինակագրելու՝ թուրքական իշխանությունների բոլոր փորձերը ձախողվեցին:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, թուրքական իշխանությունների հետ բանակցությունների միջոցով Արամն ամեն կերպ փորձեց Վանի հայությանը փրկել զրկանքներից ու շարժերից, իսկ երբ խաղաղ միջոցներով այլեւս անհնար դարձավ կանխել հայոց մեծամասշտաբ շարժերը, Արամը, որպէս ՅՅԴ ներկայացուցիչ, քաղաքական այլ ուժերի հետ ձեռնարկեց 1915թ. Ապրիլյան ինքնապաշտպանության կազմակերպումը. «Մեր կացութիւնը յուսահատական էր այն ատեն, - նկատել է Արամը: - Ընտրելու մեկ բան միայն կը մնար մեզի համար. Կամ անձնատուր ըլլալ եւ թողուլ, որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ գէն ի ձեռնի կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»: Արամը քաջ գիտակցում էր, որ հայոց դարավոր թշնամուն միայն ազգային միասնությամբ կարելի է հակահարված հասցնել, եւ այդ իսկ պատճառով ամեն ինչ արեց այդ միասնությանը հասնելու համար:

Ինքնապաշտպանության ընդհանուր գործի ղեկա-



վարման մեջ ներգրավվեցին հեղինակություն ունեցող բոլոր գործիչները՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից: 1915թ. ապրիլի 5-ին Արամի նախաձեռնությամբ ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմինը, որում նրա առաջարկով ընդգրկվեցին փորձառու զինվորականներ՝ դաշնակցականներ Բուլղարացի Գրիգորը, Կայծակ Առաքելը, ռամկավար Արմենակ Եկարյանը, անկուսակցական Փանոս Թերլեմեզյանը եւ ուրիշներ: Որոշ ժամանակ անց Արամը նույնպէս մտավ այդ մարմնի մեջ եւ ղեկավարեց Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունը:

Արամի գործունեությունը էր սահմանափակվում միայն Վանով: Դեռեւս ապրիլի 14-ին ընդունելով թուրքերի դեմ մաքառող շտախօցիների պատվիրակությանը՝ նա հրահանգեց Շատախի, Փեսանդաշտի եւ Զերծի մարտիկներին վարել բացառապէս պաշտպանական մարտեր ու միշտ լինել ժողովրդի հետ: Ելնելով քաղաքի պաշտպանների բարոյահոգեբանական, ռազմական ու պարենային կացությունը չձանրացնելու նկատառումներից՝ Արամն արգելեց Շուշանց-Վարագ գծում հավաքված 5.000 հայ փախստականների նահանջը Վան եւ Չինվորական մարմնի մյուս անդամների հետ քայլեր ձեռնարկեց նրանց պաշտպանության համար: Ապրիլի 14-ին Արամի հրահանգով այնտեղ ուղարկվեցին Այգեստանում ապաստանած 15.000 զաղթականներից առանձնացված զինված գյուղացիները: Ձեռնարկված քայլերի շնորհիվ տեղի ազգաբնակչությունը մինչեւ ապրիլի 25-ը դիմադրեց թշնամուն եւ հետո միայն հարկադրաբար նահանջեց Վան: Թուրքական զորքերի հարձակումները Վանի վրա կրկնվեցին բազմիցս, սակայն միշտ էլ հաջողությամբ հետ մղվեցին: Հայոց դիմադրությունն այնքան հերոսական ու կազմակերպված էր, որ թուրքական զորիներից մեկն առաջնորդող գերմանացի մի սպա, կրած անհաջողու-

թյունից հուսահատված, հեռացավ Վանից՝ խոստովանելով, թէ այդպիսի դիմադրության էր սպասում:

Վանի ինքնապաշտպանությունն ավարտվեց հաղթանակով, ինչի շնորհիվ ավելի քան 150 հազար վասպուրականցիներ փրկվեցին անխուսափելի կոտորածներից:

1915թ. մայիսի 7-ին ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության կազմից Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ: Սակայն, Վանի հայկական նահանգապետությունը երկար կյանք չուներ:

Հարկադրաբար հեռանալով Վանից՝ Արամ Մանուկյանը մինչեւ 1917թ. դեկտեմբերը հաստատվեց Թիֆլիսում եւ ակտիվորեն մասնակցեց Անդրկովկասում ու նրա սահմաններից դուրս եռացող ազգային-քաղաքական կյանքին, որի առանցքը ցեղասպանությունից մազապուրծ արեւմտահայ փախստականների ճակատագիրն էր:

Անուրանալի է Արամ Մանուկյանի ավանդը մայիսյան հերոսամարտերի կազմակերպման գործում: Մայիսյան հերոսամարտերը փրկեցին հայ ժողովրդին վերջնական քնաջնջումից: 1918 թ. մայիսի վերջին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

Յովհաննես Զաջազունու գլխավորությամբ 1918թ. հուլիսի 24-ին ձեւավորվեց ՅՅ կառավարությունը: ՅՅ կառավարության մեջ Արամ Մանուկյանին վստահվեց ներքին գործերի նախարարությունը: Նոր պաշտոնում ու նոր պայմաններում նրա ազգային-պետական մտածողությունն ու գործելակերպը նոր շունչ ու որակ ձեռք բերեց: Նա միշտ հանդես եկավ նախաձեռնողի, իրադարձություններին ընթացք տվողի դերում: Արամն անսպառ եռանդով իր մասնակցությունը բերեց հանրապետության առջեւ ծառայած հրատապ լուծում պահանջող խնդիրների կարգավորմանը:

Հայրենիքի նկատմամբ ունեցած բարձր պատասխանատվությունը, ժողովրդասիրությունը, համեստ կենցաղը, ազնվությունը, հետապնդվող խնդիրների նկատմամբ ցուցաբերած նախանձախնդրությունը Արամին ապահովում էին բարձր հեղինակություն:

Դժբախտաբար, Արամ Մանուկյանին վիճակված էր երկար ապրել եւ շարունակել հանրապետության ամրապնդմանն ուղղված գործունեությունը: Ժողովրդի հետ ամենօրյա անմիջական շփումների մեջ գտնվող գործիչը 1918թ. դեկտեմբերին վարակվեց հանրապետությունում մոլեգնող բժավոր տիֆով եւ 1919թ. հունվարի 29-ին կնքեց մահկանացուն: Արամի մահը ցնցեց հայ ժողովրդին, պետական, հասարակական ու կուսակցական գործիչներին: Նրա հուղարկվողությունը վերածվեց համաժողովրդական սուգի: Հուղարկավորությանը մասնակցում էր ամբողջ Երեւանը, մեծ ու փոքր, որպէսզի վերջին անգամ հարգանքի տուրք մատուցեր մի մարդու, որին վստահել էր իր ճակատագիրը ամենաօրհասական օրերին:

Արամ Մանուկյանի կյանքն ամբողջական նվիրում էր հայ ժողովրդին, նրա ազատության եւ անկախ պետականության վերականգնման համար մղվող պայքարին: Ամենուր, որտեղ էլ որ գործեց, Արամ Մանուկյանն աչքի ընկավ քաղաքական հասունությամբ ու հեռատեսությամբ, կազմակերպչական բացառիկ ձիրքով, անշահախնդիր վարքով, անկոտրում կամքով, իրատեսությամբ եւ մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման եւ նրա հիմքերի ամրապնդման գործում ունեցած առաջնակարգ եւ վիթխարի ներդրման համար Արամ Մանուկյանն արժանացավ Հանրապետության հիմնադրի պատվանվանը:

Յեղիսար ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայտարարություն

Կորել է Կրեժ Ծահենի Ղազարյանի՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր շուկայի միջնակարգ դպրոցի կողմից 2014թ. տրված ատեստատը:
Համարել անվավեր: